

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 17

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահագիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալները, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ն. Գևորգյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2023 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին:

/Ձեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Կարբի համայնքի զարգացման հիմնադրամին գումար հատկացնելու մասին:

/Ձեկուցող՝ Շ. Վահանյան/

4. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:

/Ձեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հաշվեկշիռները հաստատելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/
6. Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքն ընդունելու և դուրսգրման ենթակա գույքի կազմը հաստատելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/
7. «Արագածոտն» ջրօգտագործողների ընկերությանը Արուճ գյուղի վարչական ղեկավարի նստավայրից անհատույց օգտագործման համար տարածք տրամադրելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/
9. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 10.06.2022թ. N 85-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/
10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Թումասյան/
11. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Թումասյան/
12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Թումասյան/
13. Աշտարակ համայնքի Ոսկեվազ գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Թումասյան/
14. Աշտարակ համայնքի Փարպի գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:
/Ջեկուցող՝ Ս. Թումասյան/

15. Աշտարակ համայնքի Ուջան գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

16. Աշտարակ համայնքի Աղծք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերում այգեգործական թաղամասերի և Օշական բնակավայրում փակուղու համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

17. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

18. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

19. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

20. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

21. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքները Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

22. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը և Բ. Հարությունյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2023 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արագածոտն և Օրգով բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 2 «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 «Հովիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 1 «Մանուշակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Ավան, Բյուրական, Լեռնարոտ, Ոսկեվազ, Վերին Սասունիկ և Ուջան բնակավայրերի ճանապարհների և փողոցների հիմնանորոգում տուֆ քարով սալապատումով», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի շախմատի ակադեմիայի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Նոր Ամանոս և Ուջան բնակավայրերի ոռոգման ներտնտեսային ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ագարակ, Աղծք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արտաշավան, Արուճ, Բազմաղբյուր, Բյուրական, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Եղեսիա, Նոր Երզնկա, Սասունիկ, Տեղեր, Ուջան, Փարպի և Օրգով բնակավայրերի

խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Բյուրական, Կարբի և Ոսկեհատ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման, կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ թվով 11 միկրոավտոբուսների ձեռքբերում», «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ հատուկ բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում», «Աշտարակ համայնքում թվով՝ 35 ավտոկանգառների կառուցում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի ամառային կինոթատրոնի շենքի վերակառուցապատման, հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բազմադրյուր, Բյուրական և Սասունիկ բնակավայրում մարզադաշտերի կառուցում, հիմնանորոգում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի բնակավայրում՝ Արուճի բժշկական ամբուլատորիայի, Կարբիի բժշկական ամբուլատորիայի, Փարպիի բժշկական ամբուլատորիայի և Արագածոտն վարչական, Ուջանի վարչական շենքերի հիմնանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» և «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» (այսուհետ՝ ծրագրեր) թվով՝ 18 սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի:

Միաժամանակ սահմանել, որ սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը: Ծրագրի ներկայացման համար համայնքի 2023 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերն իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար: Ծրագրերի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Բ. Հարությունյանը և Ա. Զաքարյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Կարբի համայնքի զարգացման հիմնադրամին գումար հատկացնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Կարբի համայնքի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Շահբազյանի գրությունը /մուտք՝ 12.08.2022թ. թիվ 2109/, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի Կարբի գյուղի Այ - Թի դպրոց ուսումնական կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքներն իրականացրած կազմակերպությանը վճարելու նպատակով Կարբի համայնքի զարգացման հիմնադրամին հատկացնել 3 100 000 /երեք միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34, 37 հոդվածների պահանջներով, հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 10-Ա որոշման հավելված 1-ը:

Զեկուցողը, մասնավորապես, նշեց, որ գործունեության ընթացքում առաջացել են որոշակի խնդիրներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել համայնքային հիմնարկի կանոնադրության մեջ:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն – 5 - *Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հաշվեկշիռները հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 11.04.2022թ. N 47-Ա և 27.07.2022թ. N 119-Ա որոշումները, պարտատերերի հետհաշվարկներն ավարտելու հանգամանքը և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից կազմված լուծարման հաշվեկշիռները, հաստատել՝

- «Աշտարակի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի լուծարման հաշվեկշիռը,

- «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի լուծարման հաշվեկշիռը,

համաձայն հավելվածների:

19 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն – 6 - *Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքն ընդունելու և դուրսգրման ենթակա գույքի կազմը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածների և 69-րդ հոդվածի 6-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 25-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 11.04.2022թ. N 47-Ա և 27.07.2022թ. N 119-Ա որոշումները, լուծարման հաշվեկշիռները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ընդունել «Աշտարակի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի, «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի մնացած գույքն, ըստ լուծարման հաշվեկշիռների արդյունքների մնացորդի, համաձայն հավելված 1-ի:

Հաստատել վերը նշված ՀՈԱԿ-ների հիմնական միջոցների և արագամաշ, փոքրարժեք դուրս գրվող գույքի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

19 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը Արուճ գյուղի վարչական ղեկավարի նստավայրից անհատույց օգտագործման համար տարածք տրամադրելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Արագածոտն>> ԶՕԸ-ի տնօրենի գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Արուճ գյուղի վարչական ղեկավարի նստավայրից 165քմ մակերեսով տարածքը <<Արագածոտն>> ԶՕԸ-ին անհատույց օգտագործման տրամադրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը: Սույն որոշումից բխող հետագա ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

9. Արշակյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման 1, 3, 19 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Ձեկուցողը նշեց, որ որոշակի փոփոխություններ են նախատեսվում նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակներում, ինչը հնարավորություն կտա հավուր պատշաճի ապահովել վերջիններիս գործունեությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 10.06.2022թ. N 85-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34

հողվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 10.06.2022թ. N 85-Ա որոշման 1-ին պարբերության <<սեպտեմբերի 1-ից>> բառերը փոխարինել <<հոկտեմբերի 15-ից>> բառերով:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող /ծածկագիր՝ 07-050-0140-0028/, քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 3,215հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, 07-050-0121-0140 ծածկագրով 6,0463հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի հետ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Աշտարակ համայնքի Ոսկեվազ գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ոսկեվազ գյուղում 2021թ. կառուցված d=57-89մմ, L=1397.5գ/մ (անշարժ գույքի սեփականության իրավունքի N 22082022-02-0056 վկայականով) գազատարներն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին հանձնելու և համապատասխան պայմանագիր կնքելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 14 - Աշտարակ համայնքի Փարպի գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Փարպի գյուղում 2021թ. կառուցված d=57մմ, L=524.3գ/մ (անշարժ գույքի սեփականության իրավունքի N 09082022-02-0039 վկայականով) գազատարներն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին հանձնելու և համապատասխան պայմանագիր կնքելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 15 - Աշտարակ համայնքի Ուջան գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ուջան գյուղում 2021թ. կառուցված d=57մմ, L=888.6գ/մ (անշարժ գույքի սեփականության իրավունքի N 26082022-02-0042 վկայականով) գազատարներն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին հանձնելու և համապատասխան պայմանագիր կնքելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - Աշտարակ համայնքի Աղծք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերում այգեգործական թաղամասերի և Օշական բնակավայրում փակուղու համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումայանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աղծք բնակավայրի այգեգործական թաղամասերին տալ հետևյալ անվանումները՝

- Աշտարակ համայնք, Աղծք բնակավայր, Ձորափ, 1-ին թաղամաս:
- Աշտարակ համայնք, Աղծք բնակավայր, Ձորափ, 2-րդ թաղամաս:
- Աշտարակ համայնք, Աղծք բնակավայր, Ձորափ, 3-րդ թաղամաս:

2. Աշտարակ համայնքի Արուճ բնակավայրի այգեգործական թաղամասերին տալ հետևյալ անվանումները՝

- Աշտարակ համայնք, Արուճ բնակավայր, Արուճ, 1-ին թաղամաս:
- Աշտարակ համայնք, Արուճ բնակավայր, Արուճ, 2-րդ թաղամաս:
- Աշտարակ համայնք, Արուճ բնակավայր, Արուճ, 3-րդ թաղամաս:

3. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի այգեգործական թաղամասերին տալ հետևյալ անվանումները՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան բնակավայր, Արալեռ, 1-ին թաղամաս:
- Աշտարակ համայնք, Սաղմոսավան բնակավայր, Արալեռ, 2-րդ թաղամաս:

4. Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի այգեգործական թաղամասերին տալ հետևյալ անվանումները՝

- Աշտարակ համայնք, Օհանավան բնակավայր, Արալեռ, 1-ին թաղամաս:
- Աշտարակ համայնք, Օհանավան բնակավայր, Արալեռ, 2-րդ թաղամաս:

5. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի այգեգործական թաղամասին տալ հետևյալ անվանումը՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, Արտաշավան, 1-ին թաղամաս:

6. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Մ. Հովհաննիսյան փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Մ. Հովհաննիսյան փողոց, 4-րդ փակուղի:

7. Օշական, Աղծք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 17 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹ հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու փողոց, N 9/1 հասցեում գտնվող, 02-001-1997-0001 ծածկագրից 20քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ տրամադրելու 50 տարի ժամկետով՝ տարեկան 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարով:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 18 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.07.2022թ. N 107, N 108 և 22.08.2022թ. N 115 դրական եզրակացությունները, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ

հաստատված կարգի 17-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 02-087-0299-0001 ծածկագրով 1,5հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային նշանակության հողամասի /պատմական և մշակութային/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության փոփոխությունը:

Հաստատել Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 02-110-0153-0071 ծածկագրով 0,0551հա, հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Հաստատել Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, <<ԱՇԵՄ ՖՈՐ ԹՐԵՅԴԻՆԳ ԸՆԴ ՐԻԱԼ ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 02-110-0153-0059 ծածկագրով 0,0351հա, հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն - 19 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի

7 հողվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հողվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ քաղաքացիների և իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող որոշ հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելուն:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն – 20 - Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հողվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի և համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով, հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 21 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող փարածքները Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1274-Ն որոշմամբ հաստատված «Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները» վերտառությամբ N 1 և N 2 հավելվածի պահանջները, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված ներքոհիշյալ հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն կից հավելվածի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 22 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 11-ը, ժամը 17:00-ին:

Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա.Հունանյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի սեպտեմբերի 20-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱԿՈՆՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ